

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա խնդիրը.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է հարկերից խուսափելու հանցավոր համարվող արարքների դեպքում քրեական պատասխանատվության չափային (խոշոր եւ առանձնապես խոշոր) շեմերը վերանայելու, հարկային մարմնի կողմից ուժի մեջ մտած վարչական ակտով արձանագրված հանգամանքների հիմքով քրեական վարույթ նախաձեռնող մարմնին հաղորդումներ ներկայացնելու, ինչպես նաեւ գույքի արգելադրման քրեադատավարական ընթացակարգերը այլընտրանքային մեխանիզմ ներդնելու արդյունքում լավարկելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Գործող կարգավորումներով, մասնավորապես.

1) ՀՀ հարկային օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կամերալ (ներքին) ուսումնասիրության նպատակն է հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների եւ հարկային մարմին ներկայացված տեղեկությունների ուսումնասիրության եւ վերլուծության միջոցով պարզել՝

1) հարկերի հաշվարկման ճշտությունը.

2) միեւնույն հարկային հաշվարկում առկա համադրելի ցուցանիշների եւ տվյալների համապատասխանությունը.

3) նույն հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված՝ տարբեր հարկային հաշվարկների համադրելի ցուցանիշների ու տվյալների համապատասխանությունը.

4) հարկային հաշվարկներով եւ հարկային մարմին ներկայացված տեղեկությունների համեմատությամբ համադրելի ցուցանիշների ու տվյալների համապատասխանությունը.

5) հարկ վճարողի կողմից հարկման համակարգերի (այդ թվում՝ հատուկ) ընտրության համապատասխանությունը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին.

6) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումները:

ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թեմատիկ ուսումնասիրության իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ հարկային մարմնի իրականացրած բացառապես կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հաստատապես հայտնի հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքները, որոնց մասին հարկ վճարողը նախապես ծանուցվել է էլեկտրոնային ծանուցման եղանակով, սակայն ծանուցման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով հարկային հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված) կամ խախտումների առկայության վերաբերյալ հիմնավոր առարկություններ չի ներկայացրել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թեմատիկ ուսումնասիրություններն իրականացվում են Օրենսգրքի 343-րդ հոդվածի (Հարկային ուսումնասիրությունները) 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա, որը կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ: Թեմատիկ ուսումնասիրության հանձնարարագրում, բացի Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տվյալներից, պարտադիր նշվում են նաև՝

1) հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության արձանագրության համարը եւ ամսաթիվը, արձանագրության՝ հարկ վճարողին ծանուցման ամսաթիվը.

2) հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքներին վերաբերելի՝ ուսումնասիրության ենթակա հաշվետու ժամանակաշրջանները: Ընդ որում, ուսումնասիրության հանձնարարագրում չեն կարող ընդգրկվել՝

ա. հարկային մարմնի իրականացրած կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքներին չվերաբերող հարկատեսակներ եւ հաշվետու ժամանակաշրջաններ,

բ. համալիր հարկային ստուգման ենթարկված հաշվետու ժամանակաշրջաններ,

գ. համալիր հարկային ստուգման ընթացքում գտնվող կամ տվյալ տարվա ստուգումների ծրագրում ներառված հարկ վճարողների մոտ ստուգման ենթակա հաշվետու ժամանակաշրջաններ,

դ. Օրենսգրքի 348-րդ հոդվածով (Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունը) սահմանված կարգով ուսումնասիրված հաշվետու ժամանակաշրջաններ:

ՀՀ հարկային օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում գործող ձեակերպումը կամերալ (ներքին) ուսումնասիրության շրջանակը կապում է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հաշվարկների եւ տեղեկությունների հետ: Գործնականում, սակայն, հարկային մարմնին կարող են հայտնի դառնալ այլ աղբյուրներից ստացված տվյալներ, որոնք ենթակա ենք ուսումնասիրության եւ վերլուծության: Ներկայիս ձեակերպումը կարող է մեկնաբանվել սահմանափակող կերպով եւ ստեղծել իրավական անորոշություն:

Օրենսգրքի 349.1-րդ հոդվածի 1-ին մասում «հաստատապես հայտնի» եզրույթի հանումը նպատակ ունի բացառել իրավական անորոշությունը թեմատիկ ուսումնասիրության հիմքերի գնահատման հարցում:

Նույն հոդվածի 3-րդ մասում թեմատիկ ուսումնասիրության հանձնարարագրի հրապարակման տարեկան մեկ անգամ սահմանափակումը կարող է խոչընդոտել հարկային հսկողության արդյունավետ իրականացումը:

Ինչ վերաբերում է նույն մասի 2-րդ կետի «դ» ենթակետն ուժը կորցրած ճանաչելուն, ապա այն ուղղված է անհարկի սահմանափակման բացառմանը:

Մասնավորապես՝ Նախագծով սահմանված ՀՀ հարկային օրենսգրքի 349.1-ին հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետի կարգավորումը անհարկի սահմանափակում է հարկային մարմնի հնարավորությունը իրականացնել թեմատիկ ուսումնասիրություն հաշվի առնելու նոր բացահայտված ռիսկերը (երրորդ անձանցից եռամսյակային կտրվածքով ստացվող տեղեկությունների, հարկ վճարողի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային հաշվարկների ներկայացման արդյունքներով), քանի որ պարտադիր պայման է համարվում միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության նախկինում ուսումնասիրված հաշվետու ժամանակաշրջանի առկայությունը, ուստի Նախագծով նշված ենթակետի ուժը կորցրած ճանաչումը ուղղված է նշված անհարկի սահմանափակման բացառմանը:

Այս փոփոխությունների հիմքում ընկած է հետևյալ միասնական տրամաբանությունը, ըստ որի՝ հարկային մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված արարքի առերեսությամբ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում պետք է սեփական գործիքակազմով եւ միջոցներով հավաստի հայտնաբերված իրավախախտման հատկանիշների իսկության եւ հավաստիության մեջ, դրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված արարքի հատկանիշներին համապատասխանելուն, որից հետո միայն միջոցներ ձեռնարկի այդ փաստի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու կապակցությամբ:

Գործնականում խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ հարկային մարմնի կողմից արձանագրված հանգամանքներին կարող է տրվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Նման իրավիճակներում քրեական վարույթի նախաձեռնումը հաճախ իրականացվում է վարչական ակտի վիճարկման կամ բողոքարկման ընթացակարգերը դեռեւս չավարտված պայմաններում, ինչը հանգեցնում է վարչական եւ քրեական վարույթների զուգահեռ իրականացման, իրավական անորոշության, ուստի եթե հաղորդումը վերաբերում է հարկային մարմնի վարչական ակտով արձանագրված հանգամանքներին, ապա քրեական վարույթ նախաձեռնելու պարտականություն կառաջանա միայն այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտը մտել է ուժի մեջ եւ սպառվել են վարչական բողոքարկման ընթացակարգերը՝ անկախ դատական կարգով բողոքարկվելու հանգամանքից, այսինքն՝ վարչական ակտը կամ չի բողոքարկվել վերադասության կարգով, կամ բողոքարկվել է, սակայն շեմը գերազանցող մասով մնացել է անփոփոխ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային մարմնի կողմից բացահայտված հանգամանքները դեռեւս վարչական ակտով չեն արձանագրվել, սակայն հարկային մարմնի լիազորված պաշտոնատար անձի հաղորդմամբ հիմնավորվում է քրեական վարույթի անհապաղ նախաձեռնելու անհրաժեշտությունը՝ ապացույցների պահպանման, թվային տվյալների հայտնաբերման կամ անհետաձգելի ապացուցողական գործողությունների իրականացման նպատակով, եւ առկա է ողջամիտ կասկած, որ հապաղումը կարող է հանգեցնել ապացույցների կորստի, ոչնչացման կամ թաքցման:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում հարկային մարմնի կողմից ներկայացվող հանցանքի վերաբերյալ հաղորդումներում տեղ գտած հանգամանքների առավել ամբողջական եւ հիմնավոր ներկայացում՝ բացառելով այն դեպքերը, երբ հարկային մարմնի մի պաշտոնատար անձ վարչական ակտով ապացուցված է համարել որոշակի փաստական հանգամանքներ, բայց հետագայում այդ

ակտի վիճարկման արդյունքում հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի կողմից այդ ճանաչվել է անվավեր կամ փոփոխվել են դրանում արտացոլված հանգամանքներն այն կերպ, որ այլևս բացառվել է վարչական ակտում տեղ գտած փաստերի կապակցությամբ հաղորդում ներկայացնելը:

Նկարագրված իրավիճակում վարչական բողոքարկման ընթացակարգը հանդիսանում է հարկային վեճի բնական եւ նախնական փուլը: Հետեւաբար՝ քանի դեռ չի ավարտվել այս նախնական փուլը, նպատակահարմար չէ ստեղծել այնպիսի նախադրյալներ, որոնք հիմք կլինեն դրան զուգահեռ ու նույն փաստերի կապակցությամբ քրեական վարույթներ իրականացնելուն:

Այսպիսով, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի ընդունումը պայմանավորված է հարկային վարչարարության իրավական հստակության բարձրացման եւ հարկային հսկողության արդյունավետության ապահովման անհրաժեշտությամբ:

2) ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի (Հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը) 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է, որ նույն հոդվածում խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 45 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ մեկ հարկային տարվա ընթացքում 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 75 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով հստակեցվում է բարձրացվում են խոշոր եւ առանձնապես խոշոր չափերի շեմերը, տարբերակվում են մեկ հարկային տարվա եւ մի քանի հաջորդական հարկային տարիների ընթացքում ձեւավորված պարտավորությունների չափերը, որոնք նպատակ ունեն ապահովել քրեական պատասխանատվության համաչափությունը, բացառել համեմատաբար փոքր չափերի խախտումների անհամաչափ քրեականացումը:

Միաժամանակ փոփոխությունը նպաստում է իրավակիրառ պրակտիկայի կանխատեսելիությանը եւ իրավական որոշակիությանը: Նշված փոփոխությունների արդյունքում տեղի կունենա մասնակի ապաքրեականացում՝ հարկերից խուսափելու հանցավոր համարվող արարքների շրջանակի նեղացում:

Այսպիսով՝ այս փոփոխությունը նպատակ ունի՝

1. կանխարգելել համակարգային հարկերից խուսափումը՝ նաեւ բազմամյա սխեմաների դեպքում,

2. պահպանել համաչափությունը՝ տարբերակելով պատահական սխալը եւ դիտավորությամբ իրականացվող խախտումները,

3. ապահովել իրավական հստակություն դատական պրակտիկայի համար, ներառյալ հաշվարկի տարեթվի եւ վճարման ժամկետի տարբերությունը,

4. համահունչ լինել միջազգային փորձին, որտեղ հարկերից խուսափման գնահատման ժամանակ կարող է հաշվի առնվել խախտումների շարունակականությունը եւ մի քանի հարկային ժամանակաշրջանների ընթացքում առաջացած վնասի ընդհանուր չափը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում գնահատումը կատարվում է երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում ձեւավորված գումարի հիման վրա:

3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարության հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաեւ գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:

2. Գույքը կարող է արգելադրվել հետեւյալ հիմքերից որեւէ մեկի առկայության դեպքում.

1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ.

2) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.

3) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ.

4) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է.

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում կարող է արգելադրվել դրան համարժեք գույք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով եւ 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ

մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից եւ այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը:

2. Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձանցից յուրաքանչյուրի՝ արգելադրման ենթակա գույքի բաժինը որոշելիս վարույթն իրականացնող մարմինը հաշվի է առնում ենթադրյալ հանցագործությանը մեղադրյալներից յուրաքանչյուրի դերը եւ մասնակցության աստիճանը:

3. Արգելադրման ենթակա չէ՝

1) այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագանձում կամ բռնագրավում տարածվել.

2) իրեղեն ապացույց ճանաչված գույքը»:

Գույքի արգելադրումը քրեական վարույթի ընթացքում անձի սեփականության իրավունքը, այսինքն՝ իր հայեցողությամբ իր գույքը տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու հնարավորությունը սահմանափակող հիմնական եւ առավել խիստ միջոցն է:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը գույքի արգելադրման հիմքերը հաստատելու համար նախատեսել է ապացուցման երկու շեմ՝ ապացույցների գերակշռություն եւ ողջամիտ ենթադրություն:

Ապացուցման շեմն այն չափանիշն է, որի հիման վրա գնահատվում են ապացույցները եւ հաստատվում (կամ հերքվում) են փաստերը: Ապացույցների գերակշռությունը նշանակում է, որ մի կողմը ներկայացրել է իր պնդումների իրավացիությունը հաստատող թեկուզեւ մի փոքր ավելի ծանրակշիռ (սակայն ամենեւին ոչ բացարձակ համոզիչ) ապացույցներ, քան մյուս կողմը: Այլ կերպ ասած՝ ապացուցման այս չափանիշով որոշում կայացնելուց հետեւություն է արվում, որ առաջ քաշված թեզը կամ արված պնդումն ավելի հավանական է, քան թե՛ ոչ (օրինակ՝ խարդախության համար մեղադրվող անձն իրեն վերագրվող արարքի հետ համընկնող ժամանակահատվածում ձեռք է բերել մոտավորապես այն գումարին համարաժեք անշարժ գույք, որը նա ենթադրաբար հափշտակել է, ուստի կարելի է պնդել, որ այն ստացվել է հանցագործության արդյունքում):

Ինչ վերաբերում է ողջամիտ ենթադրությանը, ապա այն ապացուցման ավելի թեթեւ բեռ է սահմանում: Վերջինս կարելի է բնութագրել որպես որոշակի փաստերի վրա հիմնված տրամաբանական, խելամիտ եզրահանգում առ այն, որ կանխատեսվող գործողությունը կամ իրադարձությունը միանգամայն հնարավոր է կամ կարող է տեղի ունենալ (օրինակ՝ մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձը՝ նրա ծնողը, քրեական վարույթի ընթացքում օտարել է իրեն սեփականության իրավունքով պատկանող երկու տրանսպորտային միջոցներից մեկը, ինչից կարելի է ողջամտորեն ենթադրել, որ նա կարող է օտարել կամ թաքցնել նաեւ երկրորդը):

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի բացահայտում այն գույքերի տեսակները, որոնք ենթակա են արգելադրման: Օրենսդիրը գնացել է հարցի կարգավորման հակառակ ճանապարհով՝ սահմանելով այն գույքը, որը ենթակա չէ արգելադրման: Մասնավորապես,

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ արգելադրման ենթակա չէ այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագանձում կամ բռնագրավում տարածվել կամ իրեղեն ապացույց ճանաչված գույքը: Ասվածից հետևում է, որ օրենսգրքի իմաստով նշվածից բացի ցանկացած այլ գույք ենթակա է արգելադրման:

Միեւնոյն ժամանակ պետք է նկատել, որ Քրեական դատավարության օրենսգրքում «Գույք» հասկացությունը չունի ինքնավար նշանակություն, հետեաբար, դրա բովանդակությունը պետք է բացահայտել քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

«Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը եւ գույքային իրավունքները.(...)»:

Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենքի իմաստով՝

1) արժեթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաեւ այլ օրենքներով սահմանված արժեթղթերը (անկախ դրա ձեւից՝ թղթային կամ ոչ թղթային), այդ թվում՝

(...)

բ. պարտատոմսերը եւ պարտքային այլ արժեթղթերը, բացառությամբ դրամական շուկայի գործիքների,

(...)

2) դրամական շուկայի գործիքներ են համարվում մինչեւ մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերը, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը, բանկային վկայագրերը եւ այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը. (...):»:

Վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ գույք հասկացությունն, ի թիվս այլնի, իր մեջ ներառում է նաեւ արժեթղթերը եւ գույքային իրավունքները: Ընդ որում, պարտատոմսերը եւ պարտքային այլ արժեթղթերը համարվում են արժեթղթեր՝ բացառությամբ կարճաժամկետ պարտատոմսերի: Ինչ վերաբերում է կարճաժամկետ պարտատոմսերին, ապա հարկ է նշել, որ դրանք համարվում են դրամական շուկայի գործիքներ ու թեւեւ չեն ներառվում արժեթուղթ հասկացության ներքո, այդուհանդերձ համարվում են գույքային իրավունքներ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հարկ է փաստել, որ քրեադատավարական գործող իրավակարգավորումների պայմաններում քրեական վարույթով ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարույթային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաեւ գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար, ի թիվս այլնի, կարող է արգելադրվել անձին պատկանող հետեւյալ գույքը՝

1. Արժեթղթերը՝ ներառյալ պարտատոսմերը,

2. գույքային իրավունքները՝ ներառյալ դրամական շուկայի գործիքներ համարվող կարճաժամկետ պարտատոսմերը:

Քրեական վարույթի ընթացքում գույքի արգելադրման գործիքակազմի կիրառումը խնդիրներ է առաջացնում, երբ տնտեսվարող սուբյեկտի գույքի վրա կիրառված արգելանքը խոչընդոտում կամ խաթարում է վերջինիս գործունեությունը, որի հետեւանքով տնտեսվարող սուբյեկտի համար առաջանում են էական գույքային ծախսեր:

Այս նպատակով անհրաժեշտություն է առաջացել քննարկել քրեական դատավարության օրենսգրքում այլընտրանքային մեխանիզմներ ներդնելու հնարավորությունը: Մասնավորապես՝ տվյալ դեպքում խոսքը գույքն արգելադրելու փոխարեն դրան համարժեք բանկային երաշխիք տրամադրելու մասին է, որը կիրառելու հնարավորություն գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում:

Վերոգրյալի հիման վրա առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1 մասով եւ նախատեսել վարույթի ընթացքում հսկող դատախազի հաստատմամբ՝ քննիչի կամ դատարանի որոշմամբ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում դրան համարժեք արգելադրված գույքը կամ 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրված գույքն արգելանքից հանելու հնարավորություն, եթե գույքի սեփականատերը կամ տիրապետողը ներկայացնում է արգելադրված գույքին համարժեք բանկային երաշխիք: Հարկ է նշել, որ հիշյալ կարգավորումը բացառում է արգելանքից հանել եւ շրջանառության մեջ թողնել այն գույքը, որն ապացույցների գերակշռությամբ հիմնավորվել է, որ ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ, հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է: Միեւնույն ժամանակ, այն դեպքում, երբ նշված գույքի բացակայության դեպքում արգելադրվել է դրան համարժեք օրինական ծագում ունեցող գույք կամ գույքի արգելադրումը կիրառվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել, ապա գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից արգելադրված գույքին համարժեք բանկային երաշխիք ներկայացնելու դեպքում իրավասու մարմնի որոշմամբ այն կարող է հանվել արգելանքից:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի եւ բնույթի նորմատիվ իրավական ակտով, մշակվել են նշված Նախագծերը:

4. Նպատակը եւ ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման նպատակն է՝

1) բարձրացնել քրեական պատասխանատվության առաջացման գումարային շեմերը (խոշոր եւ առանձնապես խոշոր չափերը),

2) հարկային մարմնի վարչական ակտով ձեւավորված պարտավորության հիմքով քրեական վարույթ նախաձեռնվի միայն այն դեպքում, երբ վարչական բողոքարկման ընթացակարգերը սպառվել են եւ ակտը մտել է ուժի մեջ: Նախատեսել բացառիկ դեպք, երբ վարչական ակտի բացակայությամբ քրեական վարույթ կարող է նախաձեռնվել միայն հարկային մարմնի լիազորված պաշտոնատար անձի հիմնավորված հաղորդման եւ ապացույցների կորստի վտանգի առկայության դեպքում, ինչի արդյունքում կապահովվի հարկային հսկողության իրականացման արդյունավետությունը:

3) Այլընտրանքային մեխանիզմ ներդնելով լավարկել գույքի արգելադրման քրեադատավարական ընթացակարգերը:

5. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային եւ/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի ընդունումը բխում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1833-Լ հրամանի թիվ 2 հավելվածով հաստատված հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարական ծրագրի Հարկային կարգապահության ամրապնդմանն ուղղված հարկային օրենսդրության կատարելագործում նպատակի 1.1.5 կետով նախատեսված «Հսկողական գործիքակազմի կատարելագործմանն, այդ թվում՝ հանրային հսկողության ուժեղացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում» միջոցառումից, Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը եւ դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1133-Լ որոշման պահանջներից, մասնավորապես՝ ՀՀ քրեական եւ քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելուց հետո մոնիթորինգ իրականացնելու եւ օրենսգրքերի դրույթների կիրառման կապակցությամբ գործնականում ծագող խնդիրները վեր հանելու պահանջներից: